

Աստուած ազատէ մեզ, դժբա՛ մեզի պէս մեղաւորներուն վրայ: Ո՛վ Սուրբ Լօրէնս բարեխօսէ մեզի համար»:

— «Ի նձի նայէ՛ Նենչա՛», հրամայեց Մաթթէօ, «ես պիտի բանամ դուռը՝ տեսնելու թէ ո՛վ է: Թե երևա —»:

— «Այ դա՛ն կայ որ ընես», պոռայ Նենչա՛՝ ձեռքերը իրարու մէջ կղզկղով: «Սա մարդուն նայեցէ՛ք, որբա՛ն ալ քաջ է եղեր: Կը կարծես որ թոյլ պիտի տամ քեզի: Անդիի աշխարհը կ'ուզես երթալ, այնպէս չէ՞: Ուրիշ տեղ երթալու պէտք չունիս, հոս կեցիր, եւ շնորհակալ եղիր որ աւելի գէշ աղէտ մը չի պատահեցաւ մեզից»:

Նենչա օրհնուած ջուր պարունակող սըրուակը առաւ, դետինը սրսկեց, եւ բարձրաձայն սկսաւ ողևհնելու աղօթք մը կարդալ:

— «Բարի ողի, դնա՛ Աստուծոյ բով — մեռելը՝ մեռելին: Աստուած հանգստացնէ քեզ արարներու աշխարհին մէջ»:

Երբ ձեննվրա լսեց թէ զինք մեռած կը նկատէին, դիտցաւ որ այլեւ օրհնութիւն աւերակալը աւելորդ էր: Դրան սեմին վրայէն, ուր ինկած էր ուժասպառ, ելաւ եւ դողդողուն քայլերով դնաց ուրիշ ապաստանարան մը գտնելու:

(Շարունակելի)

ՄԻ ՆՈՐՈՒԹԻՒՆ

«Կեանք»-ի Տղայի մեծնայած շարունակութիւնը սոսիս հարաւուր էր, որոնք համար, ինչպէս նախ շատ ատեն ինքնուրուիկ արարեալ համար՝ մեր շարունակութեան ինչպէս ինքնուրուիկ: Այս ատեն իստորոշեցին Կեանքը (շարունակութիւն) ինքնուրուիկ իրար, որոնք մեր շարունակութեան հարաւուր էր: Այս շարունակութեան ինչպէս ինքնուրուիկ էր ինքնուրուիկ: Մ. Խ.

Հայ տպագրութիւնը իր 400-ամեայ տարեդարձին ստանում է մի գեղեցիկ նորութիւն, որ ամենալաւ ապացոյց է թէ նա յետ չէ մնում ժամանակների առաջընթացութիւնից:

Ամենքին յայտնի է թէ ինչպէս են տպա-

րանում շարեւթ անուս: Կայ առանձին գործարան, որ պատրաստում է հատի հատիկ տառեր եւ կոչուում է ձուլարան: Պէտք է ձուլարանից տառեր դնել, բերել տպարան: Այստեղ տառերը ցրում են փոքրիկ քառակուսիների մէջ: Գրաշարը հատ հատ վերցնում է այն տառերը, որոնք հարկադրաւ են բառ կազմելու համար, շարում է յատուկ գործիքի վրայ, որ բռնած ունի ձեռքում: Շարեւթը պահելը մեծ խնամք է պահանջում, որպէս զի ցրել չը գայ: Պատահում է շատ անգամ որ լրագրի կամ գրքի ամբողջ երեսներ թափուում են աշխատանքը դուր կորչում է:

Շարած տողերից երեսներ են կապում, դնում մեքենայի տակ եւ սպում: Տպելոց յետոյ քանդում են երեսները, եւ գրաշարը նորից սկսում է հատ հատ տառերը ցրել իրանց տեղերը: Այնուհետեւ այդ տառերից գրչանում են երեսներ, նորից ցրում: Եւ այսպէս, տառերը շարունակ գործածութեան մէջ են մինչեւ մաշելը:

Գրաշարութեան այս միջոցը գոյութիւն ունի Գուտենբերգի ժամանակներից ի վեր:

Վերջին տասնեակ տարիների ընթացքում շատ փորձեր արին որպէս զի գրաշարութիւնը նոյնպէս դարձնեն մեքենայական, աւելի արագացրած, աւելի ժամանակ վատտակելու եւ ծախսեր խնայելու համար: Բազմաթիւ մեքենաներ հնարեցին: Վերջին խօսքը առայժմ պատկանում է այն մեքենային, որ միաժամանակ տառեր է ձուլում ու տողեր շարում:

Մի անգամից նկատելի է այս մեքենայի ահազին առաւելութիւնները, նախ նա սաստիկ արագացնում է գործը: Նրա միջոցով մի գրաշար կարող է մի ժամում անել այն, ինչ սովորական, հին եղանակով կարող են անել չորս գրաշար:— Երկրորդ՝ առանձին ձուլարանների կարիք չէ մնում: Երրորդ տառեր միշտ նոր են, որովհետեւ ձուլում են մեքենայի վրայ եւ այսպիսով վերանում են հին մաշած տառերը, որոնք այնքան փչացնում են տպագրութիւնը:

Այս մեքենաները վաղուց գործածութեան մէջ են ամեն տեղ. նոյն իսկ Թիֆլիզում եւ Բաղուսում ուսուցիչ լրագրիչներ կան, որոնք այդ մեքենաներով են շարում: Չկար միայն Հայերէն տառեր ձուլող ու շարող մեքենան: Եւ ահա այդ էլ իրականութիւն է դարձել այսօր Ամերիկայում: Նիւ-Եօքըում հրատարակ-

ւող «Կոչնակ» շարաթաթերթի վերջին համարը, որ մենք ստացանք երէկ, շարւած է այդ մեքենայով: Մեքենան ստացաւ հայ տպագրութիւնը իր 400 յօբելեանին:

Գեղեցիկ յօբելեանական ստացւածք: Մընում է սպասել թէ երբ այդ մեքենան կը դայ կը հասնի Թիֆլիզ:— Թանգ արժեցող մեքենայ է, իսկ Թիֆլիզի տպարանների մեծագոյն մասը գրօշներով ապրող արհեստանոցներ են:— Իսկ հայ լրագիրը կարո՞ղ է մտածել այդպիսի «չռայլութեան» մասին, թէեւ նրանով ահագին դիւրութիւններ կը տրւէին ամենօրեայ լրագրութեան: